

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ

2010 Թ Վ Ա Կ Ա Ն Ի

ՀԱԿԻՐԾ ԲՅՈՒՋԵ

ԻՆՉ Է ԲՅՈՒՋԵՆ

Բյուջեն համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններին /ՏԻՄ/ Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների ձևավորման և ծախսման տարեկան ֆինանսական ծրագիր է:

Եթե ամենապարզ ձևով ներկայացնենք, բյուջեն ակնկալվող եկամուտների և առաջարկվող ծախսերի համապարփակ թվարկումն է գալիք ֆինանսական տարվա համար, կառավարման մարմինների յուրաքանչյուր գործառույթի գծով: Լավագույն դեպքում, բյուջեն պոտենցիալ սպառողների միջև սահմանափակ միջոցների համապարփակ և հետևողական բաշխումն է: Որպես այդպիսին՝ բյուջեն ՏԻՄ-երի գործունեության ֆինանսական կառավարման առանցքն է:

Սույն փաստաթղթի նպատակն է՝ ներկայացնել համայնքի բնակչությանը, թե քաղաքապետարանը ինչպե՞ս է արձագանքում համայնքի բնակիչների բարեկեցության բարձրացմանը՝ տարաբնույթ ծառայությունների մատուցման և ներդրումային ծրագրերի իրականացման միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵՎԱՎԱՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՈՒՂԵՐՉՈՒՄ

Համայնքի 2010թ. բյուջեն մշակվել է՝ հիմք ունենալով համայնքի 2009-2012թթ. զարգացման քառամյա ծրագիրը և 2009-2012թթ. կապիտալ զարգացման ծրագիրը: Համայնքի ռազմավարությունն է՝ բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները: Համայնքի 2010թ. բյուջետային քաղաքականության հիմնական ուղղություններն են՝



- ❖ *Բարելավել համայնքի ֆինանսական վիճակը՝*
 - *ճշտելով և բարձրացնելով հողի հարկի և գույքահարկի տվյալների շտեմարանները,*
 - *իրականացնելով տեղական տուրքերի և վճարների, համայնքային ծառայությունների մատուցման վարձավճարների սահմանման և զանձման ճկուն քաղաքականություն,*
 - *խթանելով ձեռներեցությունը և համայնքային տնտեսության զարգացումը,*
 - *բարձրացնելով սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը:*
- ❖ *Նպատակային օգտագործել բյուջեի միջոցները՝*
 - *բարձրացնելով բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների մակարդակը և որակը,*
 - *բարձրացնելով քաղաքապետարանի և համայնքային ենթակառուցվածքային կազմակերպությունների աշխատանքի արդյունավետությունը:*
- ❖ *Ներդրումներ կատարել համայնքի տնտեսական հարաբերությունների, շրջակա միջավայրի պաշտպանության, բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների, մշակույթի, սպորտի և կրթության բնագավառներում համայնքային ենթակառուցվածքի հիմնարկների ֆինանսական վիճակը բարելավելու նպատակով:*
- ❖ *Իրականացնել կրթության, մշակույթի և սպորտի բնագավառների համայնքային ենթակառուցվածքների նորոգման, ջեռուցման համակարգերի վերականգնման, գույքային և տեխնիկական վերագինման աշխատանքներ:*
- ❖ *Իրականացնել սոցիալական տարաբնույթ ծրագրեր:*
- ❖ *Աշխուժացնել համայնքի մշակութային, մարզական և հասարակական կյանքը:*
- ❖ *Համագործակցել դոնոր կազմակերպությունների հետ՝ համայնքային տնտեսությունում լրացուցիչ ներդրումներ ապահովելու նպատակով:*

Ես դիմում եմ համայնքի բնակչությանը, ավագանու անդամներին, հարկատուներին, քաղաքապետարանի և համայնքային կազմակերպությունների աշխատակիցներին՝ շահագրգիռ մոտեցում ցուցաբերելու համայնքի 2010 թվականի բյուջեի միջոցների ապահովման, դրանց օգտագործման ուղղությունների ճիշտ ընտրության, բյուջեի կատարման և վերահսկման նկատմամբ:

ՈՐՏԵՂԻՑ ԵՆ ԳՈՅԱՆՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

հազ.դրամ



Հ/հ	ՄՈՒՏՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	2008թ. փաստ.	2009թ. հաստ.	2010թ. կանխ.	2009թ. 2008թ. նկատ. %	2010թ. 2009թ. նկատ. %	Տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ		
							%		
							2008	2009	2010
	ԸՆԴԱՄԵՆԸ ՄՈՒՏՔԵՐ	341940.9	383890.3	299226.0	112.3	77.9	100	100	100
1	ՀՈՂԻ ՀԱՐԿ	5728.2	7044.4	7000.0	123.0	99.4	1.7	1.8	2.3
2	ԳՈՒՅՔԱՀԱՐԿ	19774.6	27411.7	21855.5	138.6	79.7	5.8	7.1	7.3
3	ՏՈՒՐՔԵՐ	9716.5	27347.0	23164.0	281.4	84.7	2.8	7.1	7.7
4	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	254338.0	270458.5	232808.5	106.3	86.1	74.4	70.5	77.8
5	ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	27757.9	37224.1	8998.0	134.1	24.2	8.1	9.7	3.0
6	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	24099.0	13869.1	5400.0	57.6	38.9	7.0	3.6	1.8
7	ՀԱՎԵԼՈՒՐԴ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ ՖԻՆ. ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ	526.7	535.5	0.0	101.7	0.0	0.2	0.1	0.0



ՈՐՏԵՊ ԵՆ ԾԱԽՍԿՈՒԿ ԴԱՍԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ



հազ.դրամ

Հ/հ	ԾԱԽՍԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	2008թ. փաստ.	2009թ. հաստ.	2010թ. կանխ.	2009թ. 2008թ. նկատ. %	2010թ. 2009թ. նկատ. %	Տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ		
							%		
							2008	2009	2010
	ԸՆԴՀԱՄԵՆ ԾԱԽՍԵՐ	355722.9	383890.3	299226.0	107.9	77.9	100.0	100.0	100.0
1	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ԴԱՍԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	47428.8	64862.6	68567.0	136.8	105.7	13.3	16.9	22.9
2	ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	200.0	400.0	400.0	200.0	100.0	0.1	0.1	0.1
3	ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	13025.5	3027.8	4962.0	23.2	163.9	3.7	0.8	1.7
4	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	70199.1	142034.8	72311.0	202.3	50.9	19.7	37.0	24.2
5	ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՍՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	59031.5	7185.5	6469.0	12.2	90.0	16.6	1.9	2.2
6	ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ	17873.5	31927.8	30341.0	178.6	95.0	5.0	8.3	10.1
7	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	137503.1	114792.3	99876.0	83.5	87.0	38.7	29.9	33.4
8	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	3531.0	11325.6	7300.0	320.7	64.5	1.0	3.0	2.4
9	ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ԶԴԱՍԿՈՂ ՊԱՅՈՒՄՍԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ	6930.4	4833.9	9000.0	69.7	186.2	1.9	1.3	3.0
10	ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ	0.0	3500.0	0.0	0.0	0.0	0.0	0.9	0.0



ԻՆՉ ՏԵՍԱԿԻ ԾԱԽՍԵՐ ԵՆ ԴԱՍԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Հ/հ	ԾԱԽՍԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	2008թ. փաստ.	2009թ. հաստ.	2010թ. կանխ.	2009թ. նկատ. %	2010թ. նկատ. %	Տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ		
							%		
							2008	2009	2010
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	355722.9	383890.3	299226.0	107.9	77.9	100.0	100.0	100.0
Ա	ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ	230566.1	295472.5	267722.0	128.2	90.6	64.8	77.0	89.5
1	Աշխատանքի վարձատրություն	100978.9	123363.7	48605.0	122.2	39.4	28.4	32.1	16.2
2	Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում	97736.9	124332.6	77704.0	127.2	62.5	27.5	32.4	26.0
3	Սուբսիդիաներ	19481.2	1770.3	0.0	9.1	0.0	5.5	0.5	0.0
4	Տոկոսավճարներ	0.0	184.2			0.0	0.0	0.0	0.0
5	Դրամաշնորհներ	0.0	26239.2	125737.0		479.2	0.0	6.8	42.0
6	Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	3731.0	12500.0	5744.0	335.0	46.0	1.0	3.3	1.9
7	Այլ ծախսեր	8638.1	7082.5	9932.0	82.0	140.2	2.4	1.8	3.3
Բ	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ	125156.8	84917.8	31504.0	67.8	37.1	35.2	22.1	10.5
1	Հիմնական միջոցներ	125156.8	84917.8	31504.0	67.8	37.1	35.2	22.1	10.5
2	Պաշարներ և բարձրաժեք ակտիվներ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
3	Վարկի մարում	0.0	3500.0	0.0	0.0	0.0	0.0	0.9	0.0



Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ

- Քաղաքապետարանի աշխատակազմի (45 աշխատակից) գործունեության ապահովում
- Քաղաքապետարանի համար սարքավորումների և գույքի ձեռքբերում
- Ընդհանուր բնույթի այլ ծառայությունների գծով գործունեության ապահովում
- Համայնքի ավագանու անդամների ծախսերի փոխհատուցում
- ՔԿԱԳ աշխատակազմի (2 աշխատակից) գործունեության ապահովում

Կրթություն

- Համայնքի թվով 6 նախադպրոցական հիմնարկների պահպանում, գործունեության ապահովում (14 խումբ, 398 երեխա, 89 աշխատակից)
- Համայնքի երաժշտական դպրոցի պահպանում, գործունեության ապահովում (108 սան, 22 աշխատակից)
- Համայնքի արվեստի դպրոցի պահպանում, գործունեության ապահովում (69 սան, 15 աշխատակից)
- Համայնքի գեղարվեստի դպրոցի պահպանում, գործունեության ապահովում (50 սան, 10 աշխատակից)
- Համայնքի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնի պահպանում, գործունեության ապահովում (12 խումբ, 107 սան, 13 աշխատակից)
- Համայնքի մարզադպրոցի պահպանում, գործունեության ապահովում (9 խումբ, 96 սան, 11 աշխատակից)
- Համայնքի ընթացակարգի դպրոցի պահպանում, գործունեության ապահովում (7 խումբ, 80 սան, 9 աշխատակից)
- Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի գազաֆիկացում

Սոցիալական պաշտպանություն

- Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին դրամական օգնության տրամադրում
- Համայնքի հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների սոցիալական պայմանների բարելավում
- Համայնքի նորածինների մայրերին դրամական օգնության տրամադրում

Հանգիստ, մշակույթ, սպորտ

- Համայնքի մշակույթի կենտրոնի և գրադարանային համակարգի պահպանում, գործունեության ապահովում (47 աշխատակից)
- Միկոյանի անվան թանգարանի պահպանում, գործունեության ապահովում (4 աշխատակից)
- Համայնքի բնակչության տեղեկատվության ապահովում (հեռուստահաղորդումներ, հայտարարություններ հեռուստատեսությամբ, հայտարարությունների ցուցատախտակների տեղադրում, թերթերի և տեղեկագրերի բաժանորդագրություն), մշակութային միջոցառումների կազմակերպում

Տնտեսական հարաբերություններ

- Համայնքի փողոցների հենապատերի և եզրաքարերի, կամուրջների նորոգում և բարեկարգում
- Քաղաքի շենքերի համար ցուցանակների տեղադրում
- Գյուղատնտեսություն (անասնաբուժության և հակահամաճարա-կային միջոցառումների ապահովում)

Շրջակա միջավայրի պաշտպանություն

- Համայնքի 135518.քառ. մ. մակերեսով փողոցների մաքրում և աղբահեռացում
- Համայնքի 3.5 հա կանաչապատ տարածքների սպասարկում և բարեկարգում
- Քաղաքի փողոցային լուսավորության սպասարկում
- Բնապահպանական ծրագրերի իրականացում

Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր

- Համայնքի բյուջեի պահուստային ֆոնդ՝ նախատեսված պարտավորությունների լրացուցիչ և չնախատեսված աշխատանքների կատարման համար

ԻՆՁ ԿԱՊԻՏԱԼ ԾՐԱԳՐԵՐ ԵՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼՈՒ ՅԱՄԱՅՆՔԻ 2010Թ. ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ

Յ/հ	Ծրագրի անվանումը	Չարվի միավորը	Աշխատանքի ծրագրի միավոր	Ծրագրի արժեքը /հազ. դրամ/	Ֆինանսավորման աղբյուրները		
					Հա-մայն-քի բյուջե	Դոնոր կազմակերպ	Պետ. բյուջե, այլ
	Քաղաքապետարանի համար վարչական սարքավորումների ձեռքբերում (գույք և սարքավորումներ)			1500.0	1500.0		
	Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի գազաֆիկացում			900.0	900.0		
	Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի գազաֆիկացման աշխատանքների համար նախագծահետազոտական ծախսեր			100.0	100.0		
	Ալավերդու Երիտասարդական փողոցի հենապատի կապիտալ վերանորոգում			1200.0	1200.0		
	Ալավերդու Երիտասարդական փողոցի հենապատի կապիտալ վերանորոգման նախագծահետազոտական ծախսեր			100.0	100.0		
	Բնապահպանական ծրագրի համար նախագծահետազոտական ծախսեր			1600.0	1600.0		
	Ալավերդի համայնքի ներքևի հատվածի փողոցների ասֆալտապատ ծածկույթի նորոգում			26104.0			26104.0
	ԸՆԴԱՄԵՆԸ			31504.0	5400.0		26104.0

ՀԱՐԳԵԼԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ

Մենք աշխատում ենք ձեզ համար: Մեր նպատակն է բարելավել ձեր կենսապայմանները: Հաճույքով հրավիրում ենք ձեզ համայնքի 2010թ. բյուջեի բաց և կառուցողական հանրային քննարկումներին՝ համայնքի հրատապ կարիքները վեր հանելու և համայնքի առաջնահերթ հիմնախնդիրները լուծելու նպատակով: Բյուջեի հանրային լսումները համայնքի բնակչության և քաղաքապետարանի միջև համագործակցության մի ձև է, որը հնարավորություն է տալիս կառուցել քաղաքապետարանի գործունեությունը՝ քաղաքացիների իրական կարիքներին համապատասխան:

Բյուջեով նախատեսված բոլոր աշխատանքներն ու ծրագրերը լիարժեք իրականացնելու համար համայնքին անհրաժեշտ է ֆինանսական ինքնուրույնություն և հետևողականություն: Քաղաքապետարանի ղեկավարությունն ու աշխատակազմը ակնկալում են համայնքի ավագանու անդամների և բնակչության շահագրգիռ մոտեցումը և ակտիվ ներգրավվածությունը բյուջեի վերջնական տարբերակի մշակման, ինչպես նաև դրա ընդունման, կատարման և վերահսկման գործում:

Այսպիսով՝

- Ստահողված էք արդյոք մեր համայնքում հանրային ծառայությունների մատուցման մակարդակով և որակով:
- Ունե՞ք արդյոք առաջարկություններ բյուջեի միջոցների օգտագործման ուղղությունների վերաբերյալ:

Եթե այո, ապա կոչ ենք անում մասնակցել համայնքի բյուջեի նախագծի **ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ**, որը տեղի կունենա քաղաքապետարանի վարչական շենքի 4-րդ հարկում **2009թ. դեկտեմբերի 2-ին, չորեքշաբթի , ժամը 14:00-ին:**

Գրավոր առաջարկություններ ներկայացնելու համար կարող եք դիմել՝

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ, Ք. ԱԼԱՎԵՐԴԻ

ՁՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՑԱ,

ԱԼԱՎԵՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Հեռախոս՝ (253) 2 – 41 - 04

Ֆաքս՝ (253) 2 – 41 - 00

Էլ. փոստ՝ vice-mayor@alaverdi.am

ՇՆՈՐՀԱՎԱԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ